ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Արմեն Հարությունյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի հունիսի 14-15-ը
4.	Հրավիրող կողմը	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ագրոարդյունաբերական համալիրի հարցերով խորհրդատվական կոմիտեի 16-րդ նիստին (հետաձգվել է անորոշ ժամանակով): Կայացել են հանդիպումներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների դեպարտամենտում:
6.	Քննարկված թեմաները	Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղամիջոցների գրանցմանը և շրջանառությանը վերաբերող հարցեր:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Կայացել են հանդիպումներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների դեպարտամենտում: Քննարկվել են անասնաբուժական դեղամիջոցների գրանցմանը և շրջանառությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ներկայիս գործընթացի վերանայումը և համապատասխանեցումը շրջանառության մեջ գտնվող «ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգման» վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի նախագծով նախատեսվող պահանջներին:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություններ,	Քննարկման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն վերանայել Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ներկայիս գործընթացը և

	ստորագրված փաստաթղթերը	կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից կմշակվի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով կկարգավորվի Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների շրջանառությունը: Միաժամանակ, կիրականացվեն անհրաժեշտ միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ժամանակ լաբորատոր և թղթային փորձաքննությունների պատշաճ և լիարժեք իրականացման գործընթացի ապահովման նպատակով:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	12.07.2018թ.